Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարությունը և Ռումինիայի հետազոտության և տեխնոլոգիայի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի պայմանների և յուրաքանչյուր երկրում գործող օրենսդրության ու կանոնակարգերի համաձայն՝ Կողմերը կաջակցեն և կզարգացնեն համագործակցություն երկու երկրների հետազոտական կազմակերպությունների, հաստատությունների և տեխնոլոգիական մարմինների միջև՝ գիտության և տեխնոլոգիայի բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 2

Համագործակցությունը մասնավորապես ընդգրկում է հետևյալ բնագավառները.

ա) համատեղ հետազոտություններ, ծրագրերի մշակում և նախագծում, ներառյալ դրանց արդյունքների փոխանակումը, ինչպես նաև այդ աշխատանքների հետ կապված գիտնականների ու հետազոտողների փոխանակում,

բ) մասնակցություն գիտական կոնֆերանսների, գիտաժողովների, դասընթացների, սեմինարների, ցուցահանդեսների և այլնի և դրանց կազմակերպում,

գ) գիտական և տեխնոլոգիական տեղեկության, փաստաթղթերի, սարքավորման և օգտագործվող նյութերի փոխանակում,

դ) յուրաքանչյուր երկրում հետազոտման և զարգացման (R&D) միջոցների ու գիտական սարքավորումների համատեղ օգտագործում,

ե) գիտական և տեխնիկական համագործակցության այլ ձևեր, որոնք կարող են փոխադարձ կերպով համաձայնեցվել:

ՀՈԴՎԱԾ 3

1. Սույն Համաձայնագիրն իրականացնելու նպատակով Կողմերը կստեղծեն համատեղ կոմիտե գիտական և տեխնոլոգիական համագործակցության ուղղությամբ:

2. Համատեղ կոմիտեի խնդիրներն հետևյալներն են.

ա) համաձայնության գալ համագործակցության բնագավառների շուրջ,

բ) սույն Համաձայնագրի կատարման համար ստեղծել նպաստավոր պայմաններ,

գ) հեշտացնել և աջակցել համատեղ ծրագրերի ու նախագծերի կատարմանը,

դ) կարծիքներ փոխանակել երկկողմ գիտական և տեխնոլոգիական համագործակցության ընդհանուր հեռանկարների շուրջ և քննարկել նոր առաջարկներ համագործակցության զարգացման ուղղությամբ:

3. Համատեղ կոմիտեն սովորաբար պետք է գումարվի երկու տարին մեկ անգամ՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Ռումինիայում, և կկնքի արձանագրություններ, որոնք կբովանդակեն համատեղ նստաշրջանների եզրակացություններն ու առաջարկությունները: Անհրաժեշտության դեպքում Համատեղ կոմիտեն կգումարվի նաև արտահերթ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կխրախուսեն ֆինանսական և այլ պայմանների հաստատումը, որը նպատակ ունի հասնելու երկարաժամկետ համագործակցության գիտական հաստատությունների, ընկերակցությունների, ընկերությունների և այլ հետազոտական ու զարգացման կենտրոնների միջև (այսուհետ՝ Համագործակցող գործընկերներ):

Համաձայնեցված նպատակների իրականացման նպատակով Համագործակցող գործընկերները ըստ թեմաների կկնքեն համատեղ գործունեության ծրագրեր:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրով նախատեսվող փորձագետների, գիտնականների և այլ մասնագետների փոխանակման ծախսերը կկատարվեն հետևյալ կարգով.

ՈՒղարկող կողմը վճարում է երկու երկրների միջև միջազգային փոխադրումների ծախսերը, իսկ Ընդունող կողմը հոգում է կեցության, հյուրընկալող երկրի ներսում ուղևորության և օրապահիկի ծախսերը՝ համաձայն յուրաքանչյուր երկրի կանոնակարգերի:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունից ստացված գիտական և տեխնոլոգիական տեղեկությունն առանց գործընկերների համաձայնության չպետք է միակողմանիորեն բացահայտվի առևտրական կամ արդյունաբերական նպատակով:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրի կատարման մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ լուծվում է Համատեղ կոմիտեի շրջանակներում՝ Կողմերի միջև անցկացվող խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության կապակցությամբ յուրաքանչյուր Կողմ, համաձայն իր օրենսդրության և կանոնակարգերի, պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները հնարավոր լավագույն պայմաններ ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 9

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը կծանուցեն միմյանց, որ Համաձայնագիրն հաստատվել է յուրաքանչյուր երկրի ներպետական ընթացակարգերի համաձայն: Վերջին ծանուցման օրը կհամարվի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամկետը:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է հինգ տարի ժամկետով և կերկարաձգվի հետագա երեք տարի ժամանակահատվածներով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցմամբ չդադարեցնի այն:

3. Համաձայնագրի դադարեցումը չպետք է վնասի սույն Համաձայնագրով նախաձեռնված և սույն Համաձայնագրի դադարեցման պահին անավարտ նախագծերի կամ ծրագրերի իրականացմանը:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 1994 թվականի սեպտեմբերի 20-ին, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարբեր մեկնաբանությունների դեպքում առաջնայնությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի օգոստոսի 20-ից: